

վերածնայ, ջրով եւ մեռայց. եւ ոչ է ինձ ընդ այս զեղջ». եւ ոմանք՝ թէ եւ Մարգարտոյ կոմս Կամպախայ՝ կամելով զերծուցանել զկայսր՝ ընդ նմին ջրասոյց եղել. շատք եւս, ընդ որս եւ մերս Ն. Լամբրունեցի ոչ սոսկ անցանել՝ այլ լուանալ ասեն ՚ի գետն կամեցեալ, եւ ոչ բաւելով կալ ընդդէմ յորձանաց ջուրցն՝ հեղձեալ, վասն ոչ գտանելոյ մերձաւորի՝ փրկել զնա. «Եւ մեր, ասէ Սուրբն, տրտմութեամբ պատահեալ եպիսկոպոսացն՝ որք գային զկնի նորա, եւ որդւոյ նորին եւ զօրացն, դարձաք ՚ի Տաքսոն». անդր զհետ ածելով ապա փոխանակ կենդանի սրտին՝ զփորոտիսն, հանեալ ՚ի զմոսել մարմնոյն, եւ թողլով զայն Հայոց՝ աւանդ տխուր սիրոյ, զողջոյն դիակնն անցուցին տխրագոյն յուղարկմամբ ընդ Հայս՝ յԱնտիոք, եւ անտի այլուր. իսկ տեղի հուսկ հանգստեան նորին՝ տակաւին ընդ երկբայութեամբ է, եւ արտաքոյ մերոյ քննութեան: Բայց աներկբայ հաւատալի է խոստովանութիւն Ս. Լամբրունեցոյն՝ վասն տրտմութեան իւր եւ նմանեացն, եւ առաւել եւս Լեւոնի, որ յայն ինչ ըմբռնելն զ՚ի վաղուց բաղձացեալ պսակն արքունի ՚ի յեղակարծումն վայրկենի վրիպեալ լինէր, թէպէտ եւ ոչ անյոյս, որպէս եւ ոչ ինքն Ներսէս. որ եւ ՚ի նմին ժամանակի հիւր ածելով յապարանս թեմին իւրոյ՝ զմի յիշխանափառ եկեղեցականաց կայսեր, զեպիսկոպոս Միւնսդէր քաղաքի, Հերման անուն, «որ ունէր իւր դաս ձիավարի զկնի՝ հազար հեծեալ», առեալ ՚ի նմանէ զկարգ Թագաւորօրինէից՝ յեղոյր ՚ի հայ՝ հաւանութեամբ կաթողիկոսին. որք եւ ՚ի գումարել կայսրորդոյն եւ աւագանւոյ նորին առ վայր մի՝ ՚ի նմին մեծի քաղաքի ՚ի Տաքսոն, խնդրեցին կատարել զխոստումն վաւերականի հօր իւրոյ՝ թագաւորեցուցանել զԼեւոն. եւ նոքա՝ ասէ մերս թարգման, «Խորհեցան, եւ ոչ կարացին յանձն առնուլ զգործն, յորժամ ինքնակալն բարձաւ ՚ի միջոյ. այլ իջին յԱնտիոք եւ անտի ՚ի Պաղեստին»²⁷: Քանզի եւ կայսրորդին Փրետրիկ՝ ոչ էր ժառանգն եւ անդրանիկ, այլ Ենրիկն որ տեղապահ կայր ՚ի Գերմանիա:

Գ. Ծանօթութիւն եւ դաշնակցութիւն Լեւոնի ընդ գլխաւորս Խաչակրացն

Սակայն Լեւոնի ելեալ ընդ առաջ կրսերոյն Փրետրիկայ՝ էած ՚ի Տաքսոն, եւ անտի ՚ի Մամեստիա, ուր հիւանդացաւ դուքսն, եւ յայց ել նմա

²⁷ «Իսկ ես (յաւելու Լամբրունեցին) զթարգմանեալ Օրինութիւն Թագաւորիս՝ ոչ կամեցայ աղաւաղել. եղի ընդ նախ թարգմանեալ *Կարգադ* (Հռոմայ եկեղեցոյն), վերստին յարմարմամբ»: